Ամփոփելով առևտրատնտեսական հայացքի ներքո կատարված ուսումնասիրությունը, մեկնաբանությունը կլինի այսպիսին. հայ-թուրքական հակամարտությունում սկզբունքային առումով փոփոխությունների նախադրյալներ դեռևս առկա չեն, գոյություն ունի միայն մի օրինաչափություն, փոխվել են միայն, այսպես ասած, մրցակցության պայքարի ձևերն ու եղանակները, այսինքն ռազմականին փոխարինելու է եկել առևտրատնտեսականը, որում գոյություն ունեցող մրցակցային առավելություն ձեռք բերելու եղանակներին փոխարինելու են եկել նորերը, որոնք իրենց բնույթով քաղաքական են և հանդիսանում են պարտադրանք, այլ ոչ թե բնականոն գործընթաց:

Ուստի, կարելի է ենթադրել, որ գերպետությունների կողմից տեղի է ունենում հայ-թուրքական հակամարտությունը խորացնելու անուղակի միտում, այսինքն, թուրքական կողմից «մրցակցային առավելություն» ձեռք բերելու պայքարում տեղի ունեցող փոփոխությունների ուղղության վեկտորը կողմնորոշված է դեպի գերպետությունների շահերը սպասարկելու ոլորտ, որտեղ գերպետությունների կողմից խթանված սցենարը, այն է տարածաշրջանում գոյություն ունեցող հակամարտություններում իրենց տնտեսական ազդեցությունը ընդլայնելու և այն առևտրային կապերով ամրապնդվելու արագընթաց գործողություններն են: Այն թուրքական կառավարության կողմից օգտագործվում է ինչպես լրացուցիչ խթան հակահայկական գործընթացի, որն իր բնույթով Հայաստանը «թուրքական էքսպանսիայի» ենթարկելու, նրանց միակ երազանքն է:

ՍՄԲԱՏ ԱՂԱՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Հանրապետության 15 տարվա առևտրատնտեսական գործարքներով շուկայական տնտեսություն ձևավորելու փորձը և որդեգրած առևտրային հարաբերությունները կարգավորելու ազատականացման ուղին նախադրյալներն են արտաքին առևտրայի գործարքների բնականոն զարգացման այն հեռանկարի, որի համար էլ կարելի է ասել ստեղծվել են գրեթե բոլոր պայմանները: Իսկ գործնականում, որպեսզի կարողանանք ամբողջական պատկերացում կազմել հանրապետության ազատական առևտրային քաղաքականության զարգացման մասին, անհրաժեշտ է այն ուսումնասիրել և, որպես տեղեկատվական հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված տեղեկագրքերը, մենք հնարավորություն կունենանք ամրագրված տվյալների միջոցով առանձնացնել հանրապետության արտաքին առևտրի զարգացման խթանները:

Հիմնվելով պաշտոնական տվյալների վրա և օգտվելով միջազգային առևտրի առանձնահատկություններից, որոնցով պայմանավորված երկրները միմյանց նկատմամբ ձեռք են բերում մրցակցային առավելություն, այն է «Ռեսուրսների պաշարի ընդլայնումն ու տեխնոլոգիական առաջընթացը անխուսափելիորեն անդրադառնում է երկրի արտաքին առևտրի ծավալների վրա»[1], այսինքն որոշակի ժամանակահատվածում տնտեսության արտադրական հնարավորությունների փոփոխության հետևանքով (ներդրումներից կախված) առաջանում է արտաքին և ներքին պահանջարկների փոփոխություն, որով էլ պայմանավորված փոփոխվում է արտաքին առևտրի զարգացման հեռանկարը:

Տնտեսության մեջ ռեսուրսների վերաբաշխման տեսանկյունից կարևորվում է ազգային արժույթի իրական փոխարժեքի ուսումնասիրությունը: Այսինքն, ազգային արժույթի փոփոխու-

[1] Տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն, Առևտուր և ֆինանսներ, 2005թ., էջ 96:

թյանն ուղղված ցանկացած միջոցառում կարող է հսկայական վնաս հասցնել ներքին արտադրողներին, որոնք իրենց ներմուծման կառուցվածքում ներառում են հումքեր, նյութեր, դետալներ, որոնք վերածվելով պատրաստի արտադրանքի՝ բավարարում են արտաքին պահանջարկը և այն սպառողներին, որոնք իրենց պահանջմունքները բավարարելու համար տվյալ շուկայից ապրանքներ գնելով ձևավորում են շուկայի ներքին պահանջարկը:

Հայաստանի նման փոքր, ռեսուրսներով սակավ ու բաց տնտեսություն ունեցող երկրում, որի տնտեսական աճը մեծապես կախված է արտասահմանից ներմուծվող վերջնական սպառման և հումքային ապրանքների գներից, ազգային դրամի արժևորումը այլ հավասար պայմաններում կմեծացնի ներմուծվող ապրանքների պահանջարկը և կարճաժամկետ հատվածում կգրանցի տեղական արտադրության (վերջնական սպառման) ապրանքների նկատմամբ պահանջարկի անկում՝ հաշվի առնելով ներքին մրցակցությունը: Որով էլ պայմանավորված տեղի կունենա տեղական արտադրության ապրանքների գների անկում:

Ազգային արժույթի արժևորման տեսականորեն հիմնավորված այս ազդեցությունը պարզելու համար, կատարենք որոշակի վերլուծություններ՝ հիմնվելով ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների[1] և մեր կողմից կազմված գծապատկեր 1-ի վրա:

Գծապատկեր 1



	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.
Սպառողական գների ինդեքսը %-ով	99.2	103.1	101.1	104.7	107	100.6	102.9	104.4
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը %-ով	100.8	99.6	102.5	108.9	113.5	107.4	96.8	100.1
Բնակչության դրամական եկամուտները	109.1	109.7	115	115.1	116.8	115	119.8	125.7

Գծապատկերում ներկայացված աղյուսակի տվյալները փաստում են, որ 2000-2007թթ. ՀՀ-ում սպառողական գների համաթիվը՝ 2000թ. 99.2%-ից բարձրացել է 2004թ. կազմելով 107%, որից հետո կտրուկ նվազել է 2007թ.՝ կազմելով 104.4%: Իսկ արդյունաբերական արտադրանքի գների համաթիվը քննարկվող ժամանակահատվածում ունի հետևյալ պատկերը, 2000թ. 100.8%-ից այն բարձրացել է 2004թ. կազմելով 113.5%, սակայն որից հետո այն կտրուկ նվազել է և 2007թ. ամրագրել է 100.1% ցուցանիշ: Բնակչության դրամական եկամուտները տվյալ ժամանակահատվածում բարձրացել են, հիմնականում տրանսֆերտների[2] շնորհիվ, համապատասխանաբար՝ 2000թ. 109.1%-ից մինչև 2007թ. 125.7%: Տվյալները փաստում են նաև, որ ազգային արժույթի արժևորման ժամանակահատվածում՝ 2004թ. սկսած տրանսֆերտներով պայմանավորված եկամուտների աճը ուղեկցվում է սպառման գների համաթվի և արդյունաբերողների արտադրանքի գների համաթվի անկումով, որն էլ ենթադրում է ռեսուրսների անարդյունավետ վատնում: Այսինքն, ազգային արժույթի արժևորման պայմաններում հայրենական արտադրողը

[1] ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը, «Մակրոտնտեսական ցուցանիշներ 1999-2007թթ հունվար-դեկտեմբրին»:
[2] Հայաստանի վիճակագրական տարեգիրք , 2007թ., էջ 463:

կրում է մեծ վնասներ, քանի որ ազգային արժույթի արժևորման դեպքում արտահանումը, ինչպես նաև արտարժույթով եկամուտներ ստացող բնակչության ճնշող մեծամասնության եկամուտները նվազում են՝ արժույթի իրական փոխարժեքի նվազման տեսանկյունից[1]: Ուստի, կարելի է ենթադրել, որ արտահանման ժամանակ տեղի է ունենում ռեսուրսների ոչ համարժեք փոխանակում, որի հետևանքով էլ նվազում է տեղական արտադրության ծավալները: Իսկ գնողունակությունից կախված, ազգային արժույթի արժևորման պայմաններում բնակչության՝ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գնորդներին ձեռնտու է գնել, համեմատաբար ցածր գներով առաջարկվող արտասահմանյան արտադրանքը, որի հետևանքով տեղի է ունենում ռեսուրսների պաշարների անհամաչափ բաշխում: Այս շրջապտույտը, հիմնականում բնութագրում է տրանսֆերտներից գոյացող միջոցների արտահոսք, որի անարդյունավետ օգտագործման հետևանքով զսպվում է հանրապետությունում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման ներուժը:

Ազատական ռեժիմի պայմաններում հանրապետության կողմից իրականացված առևտրատնտեսական գործընթացները իրենց բնույթով արդյունք են այն ապրանքներով իրականացվող առևտրի, որոնցով հանրապետությունը և իր գործընկեր երկրները միմյանց նկատմամբ ձեռք են բերել մրցակցային առավելություն: Այսինքն, ժամանակից կախված ապրանքատեսակները իրենց արտահանման և ներմուծման ծավալների տվյալներով փաստում են առկա այն ռեսուրսներով պայմանավորված ապրանքների արտադրության բոլոր հնարավոր առավելագույն համադրությունները, որոնք էլ հանդիսանում է տվյալ տնտեսության արտաքին առևտրի դինամիկ զարգացման հիմնական խթաններից կարևորագույնը: Ուստի անհրաժեշտ է դիտարկել ՀՀ ԱՎԾ տվյալների[2] հիման վրա մեր կողմից հաշվարկված ու կազմված աղյուսակ 1-ը.

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին առևտուրը ըստ ապրանքային խմբերի 2004-2007թթ.

Խումբ		2004	2005	2006	2007
Ընդամենը	Արտ	722911.5	973920.5	985108.2	1152300.8
	Ներ	1350697.6	1801735.9	2191612.6	3267788.0
Պատրաստի սննդի արտադրանք	Արտ	69153.9	96878.9	95056.3	144548.5
	Ներ	112648.4	145912.5	163755.3	256413.8
Հանքահումքային մթերք	Արտ	99644.6	93485.6	136552.4	173537.7
	Ներ	209426.0	297402.3	366007.7	516374.8
Քիմիական արտադրության ապրանքներ	Արտ	2022.8	3116.4	4496.8	9682.8
	Ներ	85231.6	118439.4	150396.1	220011.7
Թանկարժեք քարեր և մետաղներ	Արտ	299259.5	336340.8	300964.0	208729.3
	Ներ	291522.3	347634.3	312499.8	296724.7
Մեքենաներ և սարքավորումներ	Արտ	21855.4	28000.5	20819.2	39629.3
	Ներ	135542.0	232486.1	304384.2	427349.0
Տրանսպորտային միջոցներ	Արտ	9432.5	11172.4	14286.3	26437.8
	Ներ	92527.5	151750.0	196646.9	422759.3
Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից	Արտ	137643.1	321953.1	280895.8	390159.8
	Ներ	60801.8	94062.4	163727.6	341290.2
Ընդհանուրի մեջ ընտրված ապրանքախմբերի տեսակարար կշիռը %-ով					78.6%

[1] Տ.գ.դ., պրոֆեսոր, Թ.Թորոսյան, միջազգային տնտեսագիտություն, Առևտուր և ֆինանսներ, 2005թ, էջ 214:
[2] ՀՀ արտաքին առևտրի դասակարգման 2-նիշ մակարդակ 2008թ., «ՀՀ արաքին առևտրի կառուցվածքը 2004-2007թվականներին», էջ, 41:

Աղյուսակ 1-ում առանձնացված են այն ապրանքախմբերը որոնց շրջանառության տեսակարար կշիռների (մեծից փոքր) միագումարը 2007թ. ընդհանուր ապրանքաշրջանառությունում կազմել է 78.6%, և նրանց զարգացման տարեկան միջին ցուցանիշը համեմատաբար ավելի բարձր է մյուս ապրանքախմբերի կողմից ամրագրած զարգացման ցուցանիշներից, ապա կարելի է ենթադրել, որ տվյալ ապրանքախմբերով 2004-2007թթ. իրականացված առևտուրը նախադրյալներ են ստեղծում արտաքին առևտրի հետագա դինամիկ զարգացման: Ուստի հույսով ենք, որ տվյալ ապրանքախմբերի դինամիկ զարգացման ուսումնասիրությունը մեզ հնարավորություն կընձեռի առանձնացնել ՀՀ ներքին շուկայում առկա արտաքին և ներքին պահանջարկներով ձևավորված այն ապրանքների և արտադրատեսակների համեմատական առավելությունները, որոնցով էլ պայմանավորված կլինի հանրապետության արտաքին առևտրի զարգացման հեռանկարը:

Այսպիսով, «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը բուսաբուծության և անասնապահության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման և «բնական» մասնագիտացված ուղղվածություն ունեցող ապրանքախումբ է, իր մեջ ընդգրկում է վերջնական սպառման և միջանկյալ արտադրատեսակներ: Հանրապետությունում այն գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկն է, ՀՀ գործում են վերամշակման մի շարք գործարաններ, որոնցից մի մասի նվազ տեխնոլոգիատար արտադրանքները համապատասխանում են արտահանման պահանջներին: Որով էլ պայմանավորված 2004թ. ապրանքախմբերի արտահանման ընդհանուր ծավալում ունեցել է 9.6% իսկ 2007թ. 12.5% տեսակարար կշիռ, տարեկան աճի միջին տեմպը հասցնելով 30.1%: Իսկ ներմուծման ծավալների տեսակարար կշիռը 2004թ. ապրանքախմբերի ներմուծման ընդհանուր ծավալում ունեցել է 8.3% իսկ 2007թ. այն նվազել է հասնելով 7.8%-ի, տվյալ ժամանակահատվածում ապահովելով 32.8%, տարեկան աճի միջին տեմպ: Ապրանքախմբի տեսակարար կշիռը 2007թ. ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում կազմել է 9.1%, որտեղ ներմուծման ծավալը արտահանման ծավալի նկատմամբ գերազանցել է մոտ 1.8 անգամ, որով էլ պայմանավորված տվյալ ապրանքախմբի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 111865 հազ. ԱՄՆ դոլար: Ապրանքախումբը իր պտղի և բանջարեղենի ներքին պահանջարկը հիմնականում բավարարել է տեղական արտադրությամբ, և ներկրվում է հիմնականում մերձարևադարձային պտուղներ: Տվյալները փաստում են նաև, որ հանրապետությունը պտղաբանջարեղենի վերամշակման արտադրանքի առումով կարող է հասնել մեծ հաջողությունների, եթե որոշ պահածոների գործարաններում իրականացվի տեխնիկատեխնոլոգիական վերազինում, ապա նրանց արտադրանքի արտահանման ծավալները ապագայում նույնպես կաճեն:

Հաջորդը, դա «հանքահումքային մթերք» ապրանքախումբն է, իր արտահանման տեսակարար կշիռը ապրանքախմբերի արտահանման ընդհանուր ծավալում ապահովել է համապատասխանաբար 2004թ. 13.8% և 2007թ. 15.1%, իսկ արտահանման ծավալների տարեկան աճի միջին տեմպը հասցրել է 22.3%: Ներմուծման ծավալների տեսակարար կշիռը 2004թ. ապրանքախմբերի ներմուծման ընդհանուր ծավալում կազմել է 15.5%, իսկ 2007թ. այն կազմել է 15.8%-ի, տարեկան աճի միջին տեմպը հասցնելով 35.4%-ի: Տվյալ ապրանքախմբի տեսակարար կշիռը 2007թ. ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում կազմել է 15.6%, որում արտահանման ծավալը մոտ 3 անգամ զիջում է ներմուծման ծավալին, որով էլ պայմանավորված ապրանքախմբի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 342837 հազ. ԱՄՆ դոլար: Լինելով բնակլիմայական պայմաններով պայմանավորված ապրանքախումբ, տվյալ ապրանքախմբում առանձնացված որոշ հումքատեսակների (հանքաքար, խորամ և մոխիր) նկատմամբ հանրապետությունն ունի համեմատական առավելություն, որով էլ պայմանավորված է հանրապետության մասնագիտացումը տվյալ ապրանքատեսակի արտահանման նկատմամբ, այն իր բնույթով նվազ տեխնոլոգիատար է:

Հաջորդը «թիմիական արտադրության ապրանքներ» ապրանքախումբն է՝ որը բնական և արհեստական արդյունաբերական ծագում ունեցող հումքերով արտադրատեսակների ամբողջություն է: Ապրանքախումբը արտահանման իր ծավալների դինամիկ աճը իրականացրել է նվազ տեխնոլոգիատար ապրանքատեսակներով, որոնց տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է՝ 2004թ. 0.3% և 2007թ. 0.8% ապրանքախմբերի արտահանման ընդհանուր ծավալում. իսկ տարեկան աճի միջին տեմպը կազմել է 71.2%: Ներմուծման ծավալների դինամիկ աճը պայմանավորված է ռեսուրսների և բարձր տեխնոլոգիաների համադրությամբ արտադրված արտադրանքներով, որով էլ պայմանավորված ապրանքախմբերի ներմուծման ընդհանուր ծավալում նրա տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է՝ 2004թ. 6.3%-ը, իսկ 2007թ. 6.7%, ներմուծման ծավալների տարեկան աճի միջին տեմպը կազմել է 37.4%: Ապրանքախմբի տեսակարար կշիռը 2007թ. ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում կազմել է 5.2%, որտեղ ներմուծման ծավալը արտահանման ծավալի նկատմամբ գերազանցել է մոտ 22.7 անգամ, որով էլ պայմանավորված ապրանաքախմբի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 210329 հազ. ԱՄՆ դոլար:

Հաջորդը «թանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքախումբն է և միայն հումքի վերամշակման գործընթացի (աշխատուժի մասնագիտացման բարձր մակարդակի) կազմակերպման շնորհիվ արտաքին շուկայում ձևավորվել է պահանջարկի բարձր մակարդակ, սակայն կախված հումքի մատակարարումից այն իր արտահանման ծավալների տեսակարար կշիռը 2004թ. ապրանքախմբերի արտահանման ընդհանուր ծավալում ունենալով 41.4%, 2007թ. նվազել է հասնելով 18.1%-ի, տարեկան նվազման միջին տեմպը կազմել է 9.6%: Իսկ ներմուծման ծավալների դինամիկ պատկերը հետևյալն է, այն 2004թ. ապրանքախմբերի ներմուծման ընդհանուր ծավալում ունեցել է 21.6%, իսկ 2007թ. նվազել է հասնելով 9.1%-ի, և տարեկան նվազման միջին տեմպը կազմել է 4.9%: Ապրանքախումբի տեսակարար կշիռը 2007թ-ի ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում ունեցել է 11.4%, որտեղ ներմուծման ծավալը արտահանման ծավալի նկատմամբ գերազանցել է ավելի քան 1.4 անգամ, որով էլ պայմանավորված տվյալ ապրանաքախմբի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 87995.4 հազ. ԱՄՆ դոլար:

Հաջորդը «մեքենաներ և սարքավորումներ» ապրանքախումբն է, որն իր մեջ ընդգրկում է արտադրության հետևյալ ոլորտները՝ ռոբոտատեխնիկա, միկրոէլեկտրոնիկա, համակարգիչների համակարգային ապահովումը և այլն: Այս ապրանքախմբում զարգանում է ներճյուղային առևտրի հնարավորությունը, որը հանրապետությանը գլոբալ արտադրական համակարգի մեջ ընդգրկվելու հնարավորություն է ընձեռում: 2004թ. ապրանքախմբերի արտահանման ընդհանուր ծավալում ունենալով 3%, իսկ 2007թ. այն հասել է 3.4%-ի, որով էլ պայմանավորված է արտահանման ծավալների 30.9% տարեկան աճի միջին տեմպը: Ներմուծման ծավալների տեսակարար կշիռը 2004թ. ապրանքախմբերի ներմուծման ընդհանուր ծավալում ունեցել է 10% իսկ 2007թ. 13.1%, որով էլ պայմանավորված է 47.6% տարեկան աճի միջին տեմպը: Ապրանքախմբի տեսակարար կշիռը 2007թ. ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում կազմել է 10.6%, որտեղ արտահանման ծավալները մոտ 10.8 անգամ զիջում են ներմուծման ծավալներին, որով էլ պայմանավորված ապրանքախմբի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 378720 հազ. ԱՄՆ դոլար: Այս ապրանքախումբը հանդիսանում է հանրապետության գերակա ճյուղերից մեկը, ուստի ուշադրության կենտրոնում են արտասահմանյան այնպիսի արտադրական հզորությունների ու կապիտալ ներդրումների ներգրավումը, որոնց համատեղ արտադրաությունը ոչ միայն բավարարում է տեղական պահանջարկը (հիմնականում բանկային սեկտորը), այլ ավելի շատ ուղղված է արտաքին շուկաներ ներթափանցելու համար:

Հաջորդը «տրանսպորտային միջոցներ» բարձր տեխնոլոգիատար ապրանքախումբն է, արտահանման հիմնական մասը կազմում է վերգետնյա տրանսպորտային միջոցների համար,

նվազ տեխնոլոգիատար մասերից և սարքավորումներից կազմված առևտուրը: 2004թ. ապրանքախմբերի արտահանման ընդհանուր ծավալում ունեցել է 1.3%, իսկ 2007թ. 2.3% տեսակարար կշիռ, որի տարեկան աճի միջին տեմպը կազմելով 43.8%: Ներմուծման ծավալներում հիմնականում ընդգրկված են այնպիսի ապրանքատեսակներ, որոնք հագեցված են ժամանակակից տեխնիկատեխնոլոգիական արտադրատեսակներով, որոնց արտադրությունը հանրապետությունում բացակայում է, որով էլ պայմանավորված 2004թ. ապրանքախմբերի ներմուծման ընդհանուր ծավալում ունենցել է 6.9%, 2007թ. այն հասցնելով 12.9%-ի, իսկ տարեկան աճի միջին տեմպը կազմել է 69.5%: Տվյալ ապրանքախումբի տեսակարար կշիռը 2007թ. ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում կազմել է 10.2%, որտեղ ներմուծման ծավալը արտահանման ծավալի նկատմամբ գերազանցել է մոտ 16 անգամ, որով էլ պայմանավորված ապրանաքախմբի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 396321.5 հազ. ԱՄՆ դոլար:

Եվ վերջինը, դա «ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից» ապրանքախումբն է, այստեղ հանրապետությունը որոշ ապրանքատեսակներում ունի համեմատական առավելություն, որոնք իրենց արտադրության բնույթով նվազ տեխնոլոգիատար են, 2004թ. ապրանքախմբերի արտահանման ընդհանուր ծավալում ունեցել է 19%, իսկ 2007թ. 33.9% տեսակարար կշիռ, որով էլ պայմանավորված է արտահանման ծավալների 53.4% տարեկան աճի միջին տեմպ: Ներմուծման ծավալները 2004թ. ապրանքախմբերի ներմուծման ընդհանուր ծավալում ունեցել է 4.5%, իսկ 2007թ. 10.4% տեսակարար կշիռ, և իր տարեկան աճի միջին տեմպը կազմել է 79.1%: Տվյալ ապրանքախմբի տեսակարար կշիռը 2007թ. ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում կազմել է 16.5%, որում արտահանման ծավալները ավելի քան 1.1 անգամ գերազանցում են ներմուծման ծավալներին, որով էլ պայմանավորված ապրանքախմբի առևտրային հաշվեկշիռը ունեցել է դրական մնացորդ և կազմել է 48869.6 հազ. ԱՄՆ դոլար:

Ընդհանուր առմամբ 2004-2007թթ. ընկած ժամանակահատվածում ընտրված ապրանքախմբերով իրականացրած արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին է ընկել ներմուծման ծավալներին, որի տեսակարար կշիռը 60.7%-ից հասել է 71.4%-ի, ծավալների գումարային արժեքը ավելացնելով 2.2 անգամ, որը 2007թ. ՀՆԱ-ում կազմել է 79%: Կարելի է ասել, որ հանրապետության շուկայի ներքին պահանջարկի թե՛ քանակական և թե՛ որոկական փոփոխությունները հիմնականում պայմանավորված են ներմուծվող ապրանքատեսակների բարձր տեսակարար կշռով:

Տեխնոլոգիատարության տեսանկյունից ընտրված ապրանքախմբերում արտահանման դինամիկ զարգացման վերլուծությունը հնարավորություն կտա մեզ պարզել ապրանքախմբերում առկա այն ներուժը, որոնցով էլ պայմանավորված է հանրապետության արտաքին առևտրի զարգացման հեռանկարը:

Այսպիսով, վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահանման ընդհանուր ծավալում գերակշռում է ռեսուրսատար ապրանքատեսակների դինամիկ զարգացման աճը՝ որը տվյալ ժամանակահատվածում իր տեսակարար կշիռը ավելացրել է 11.3%-ով: Հաջորդը դա բարձր տեխնոլոգիատար ապրանքատեսակներն են, որոնք տվյալ ժամանակահատվածում իրենց տեսակարար կշիռը ավելացրել են 1.4 %-ով: Իսկ նվազ տեխնոլոգիատար ապրանքատեսակները հակառակը 15%-ով նվազեցրել են իրենց տեսակարար կշիռը արտահանման ընդհանուր ծավալում:

Այսպիսով, մենք վերլուծության շնորհիվ հնարավորություն ունեցանք 2004-2007թթ. ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող դրամավարկային քաղաքականության և արտաքին առևտրի զարգացման ապահովվածության մակարդակը բնութագրող մի պատկեր, որում.

1. ազգային արժույթի արժևորմամբ զսպվում է ռեսուրսների արդյունավետ օգտագործման ներուժը,
2. արտահանման մեջ բարձրանում է ռեսուրսատար ապրանքատեսակների տեսակարար կշիռը,
3. արտահանման մեջ բարձրանում է բարձր տեխնոլոգիատար ապրանքատեսակների տեսակարար կշիռը:
4. արտահանման մեջ նվազում է նվազ տեխնոլոգիատար ապրանքատեսակների տեսակարար կշիռը:

Ամբողջացնելով հետազոտության արդյունքները, կարելի է փաստել, որ հանրապետության արտաքին առևտրի զարգացման ներուժը, ներկա փուլում, պայմանավորված է պետության միջամտությամբ, որի ազդակներից կախված փոփոխվում է արտաքին առևտրի զարգացման դինամիկան: Այսինքն, պետության ազդակների կիրառման դեպքում ունենում ենք բացասական և դրական հետևանքներ, առաջինի դեպքում, ըստ մեզ պետության կողմից վարվող դրամավարկային քաղաքականության հետևանքով զսպվում է արտաքին առևտրի զարգացման ներուժը: Երկրորդի դեպքում, պետության անմիջական միջամտությամբ խրախուսվում է հանրապետության առանձնահատկությունները, այն է մարդկային կապիտալը, որում յուրօրինակ մտահաղացումներով հայտնագործությունները ու տեխնիկական լուծումներով մասնագիտացումը, խթան են հանդիսանում բարձր տեխնոլոգիատար ապրանքատեսակների արտահանման տեսակարար կշիռի ավելացման վրա:

Պետության անմիջական միջամտության պարագայում, արտաքին առևտրի բնականոն գործընթացը կարելի է դիտարկել ինչպես տնտեսությանն առաջարկված բարեփոխումներ (կարճաժամկետ, թե երկարաժամկետ կտրվածքով), որոնք բացահայտման և համակերպման գործընթացներ են, այսինքն առաջինի դեպքում նվազ տեխնոլոգիատար ապրանքատեսակների արտահանման ծավալների նվազումը, պայմանավորված է նրանց արտադրությունում տեխնիկան-տեխնոլոգիաների զինվածության ցածր մակարդակով, որոնք արտաքին առևտրի պայմանների փոփոխությանը չկարողացան համակերպվել և կարիք ունեն զարգացման միջազգային նորմերին համապատասխանող տեխնիկատեխնոլոգիաների ներդրման: Երկրորդի դեպքում, ռեսուրսատար ապրանքատեսակների արտահանման տեսակարար կշռի ավելացումն է, այս երևույթը ըստ մեզ արտաքին ազդակներին համակերպվելու վառ ապացույց է, այսինքն՝ ազգային արժույթի արժևորման պայմաններում, շահավետ են դառնում արտահանվող ռեսուրսատար ապրանքատեսակներում ներքին ներդրումներից ակնկալվող շահաբաժինները, քանի որ ավելանում է արտահանումից ակնկալվող եկամուտների արտարժութային արժեքը:

Այսպիսով, ամփոփելով հետազոտության արդյունքները, կարելի է փաստել, որ ՀՀ արտաքին առևտուրը ուղղորդվում է արտաքին ազդակներով, որոնք պայմանավորում են թե քանակական և թե որակական չափանիշներով զարգացում, որտեղ պետության անմիջական միջամտության ներքո փոխվում են տնտեսությունում առկա ռեսուրսների օգտագործման հարաբերակցությունը, առաջնային են դառնում ներճյուղային արտադրության ու առևտրի կազմակերպումը և գլոբալ տնտեսության մեջ ներգրավվելու չափանիշներին համապատասխանող մասնագիտացված ապրանքատեսակներով առևտուրը:

Կարելի է ասել, որ հանրապետության արտաքին առևտրի զարգացման հեռանկարը ուղղորդվում է դրական աճի դինամիկայով, որի արագընթաց տեմպերի աճը կախված է ներդրումների ներգրավումից, բարձր տեխնոլոգիատար ապրանքատեակների արտադրությունից և հանրապետության արդյունաբերությունում նորամուծությունների ներդրման առաջանցիկ տեմպերից, որում նորագույն տեխնոլոգիաների յուրացումը և արտադրական տեխնիկատեխնոլոգիական գործընթացների նորացումը պետք է ուղղված լինի վերջնական արտադրանքի արտադրության վրա: